

ԼԳԻՏՄԱԿԱՆ ՍՍԼՕՆ

անդառաւոր jour-fixe-ը նուերված է

Մ Շ Ա Կ Ի Ն

արտիստները մասնակցութեամբ Մուսքը անափակ թևով, կողմնակի մարդկանց համար արժանախի բաժանորդների համար 1 ր., որ բերել:

(չ.հ.ո.) 26. 4-4

ու ռ և ս կ ս և թ ա տ ր օ և
ե.բշարթի շՅի.նեւ հինգշարթի 24-ին

Գ Ա Ս Տ Ր Օ Ղ

Կ Ա Բ Ա Ր Է Ի

Դ Ա Մ Ա Յ Ե

Սօսկվայի Գեղարուեստական թատրոնի արտիստ

ԱՏՐՕՆԻ ԿԱՍՍԱՅՈՒՄ. 350. 2-1

Բ Ժ Ի Ծ Կ

Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՅ

նեբրին, երեխայոց և ստամոքսա-ազիքային հիւանդութիւններ:

Պրօֆ. Mathien -ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում:

Լ՛նդունելութիւնը (առաւ. ժ. 9—11. Երեկ. ժ. 5—7.

Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067. (կ.չ.ու.) առ. 179. 100—23

ՈՂՁՈՒՆՈՒՄ ԵՆՔ

ԷՋՄԻՆՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայ հասարակութեան յայտնի է, որ հրապարակի վրա զրվել էր հայկական տպագրութեան 400-ամեակի յօբելեանը տօնելու հարցը:

Երբ պարզվեց այն վէճը, թէ երբ է տեղի ունենցել առաջին տպագրութիւնը, և ուշանվեց, որ, արգարև, դա կատարվել է 1512 թ., մենք այն միտքը յայտնեցինք դեռ մարտի 13-ին «Մշակի» մէջ (№ 54) և «Արօր» ամսագրի փետրվարի համարում, թէ այդպիսի մի մեծ և կարևոր պատմական դէպքի յօբելեանը համազգային դարձնելու և նրան պատմական մի մեծ ակտով յաւելեթացնելու համար անհրաժեշտ է հաստատել էջմիածնում մի կենտրո-

նական յանձնաժողով, Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատուաւոր նախագահութեան ներքոյ, նշանակելով իբրև անդամներ հայ նշանաւոր բանասէրներից մի քանիսին—լուսաւորչական և այլադասան—և կատարել մեծ տօնը էջմիածնում, իբրև մի վայրում, որ առաջին մեծ առնչութիւն է ունեցել հայկական տպագրութեան հետ, երկրորդ՝ որ նրա շուրջն է գտնվում հայկական տառերի գտնող Մեսրոպի շիրիմը: Մենք ծրագրում էինք, որ այդ տօնախմբութեան հրաւիրվեն էջմիածին նաև Կիրիկիայի կաթողիկոսը, Կ. Պօլսի և Երուսաղէմի պատրիարքները, հայ-կաթողիկէ և հայ-ռողոքական հատուածների հոգևոր պետերը և հայ բանասիրութեան մէջ աչքի ընկնող անհատները:

Այսօր մեզ հաճելի է արձանագրել այն փաստը, որ մեր առաջարկը, որ և շատերի առաջարկն էր, իրագործվել է, եթէ ոչ ամբողջովին, գոնէ իր էական մասերով, այն է՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատել է էջմիածնում մի կենտրոնական յանձնաժողով, որոշել է միացնել հայկական զբերի զիւտի 1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակը և կատարել այդ մեծ յօբելեանը ներկայ տարվայ հոկտեմբերի 13-ին, Թարգմանչաց տօնի օրը, որով և Մեսրոպի ու Սահակի անունը կապվել է նոյնպէս մեծ գաղափարի հետ:

Միևնոյն ժամանակ որոշված է ի յիշատակ համազգային այդ մեծ տօնի 1) հիմնել դպրոցական ֆօնդ ազգային դպրոցների բարգաւաճման համար և 2) հրատարակել էջմիածնի մատենադարանի կարևոր ձեռագիրները:

Կրկնում ենք, ուրախալի է, որ էջմիածինը ըմբռնեց կարևորութիւնը՝ կենտրոնացնելու իր մէջ ազգային այդպիսի մի մեծ տօնախմբութեան կատարումը և աշխատելու յաւերժացնել նրան մի մեծ ակտով, որպիսին մենք համարում ենք ծրագրված կէտերը:

Եթէ մենք առաջարկում էինք կատարել տօնը էջմիածնում, հաստատել հեղինակաւոր և ձեռնհաս յանձնաժողով, այդ մենք անում էինք զրգոված այն մտքից, որ տօնախմբութիւնը լիւնի համազգային և չր կատարվի անջատ-անջատ, զանազան տեղերում, այլ ազգի բոլոր հատուածները, բոլոր իրմբակցութիւնները միանան և կատարեն մի մեծ համազգային տօնախմբութիւն:

Ուրեմն, այսօր, երբ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրութեամբ, այդ գլխաւոր միտքը իրագործված է, մենք համոզված ենք, որ մասնաւոր և պատահաբար կազմված մասնաժողովները կը միանան կենտրոնական յանձնաժողովի հետ և աջակցելով սրան կաշխատեն, որ հոկտեմբերի 13-ին ազգային մեծ տօնը կատարվի Էջմիածնում ոչ միայն հանդիսաւորութեամբ, այլ և օգտաւէտութեամբ: Մենք համոզված ենք, որ այլ ևս մի կողմը կը թողնվի դիտաւորութիւնը՝ կատարել տօնախմբութիւնը զանազան տեղերում և զանազան ժամանակ, այլ ամենքը կը միանան՝ հոկտեմբերի 13-ին Էջմիածնում կատարվելիք մեծ տօնին և կը դարձնեն այն համազգային:

Նոյնպէս մասնաւոր հանգանակութիւնները այլ ևս չը պէտք է տեղի ունենան, իսկ եթէ տեղի ունենան, նրանք պէտք է յանձնվեն Էջմիածնի կենտրոնական յանձնաժողովին: Հայ նուիրատու հասարակութիւնն ևս պէտք է ոյժ տայ Էջմիածնի յանձնաժողովին:

Ողջունելով ուրեմն Էջմիածնի որոշումը և պատրաստ լինելով ցոյց տալու ամեն աջակցութիւն, որքան այդ կախված կը լինի մամուլի մի օրգանից, մենք յորդոր ենք կարդում հայ հասարակութեանը մասնակցել հոկտեմբերի 13-ին Էջմիածնում կատարվելիք ազգային մեծ տօնին: Իսկ թէ ինչ եղանակով մասնակցել, մենք դրա մասին շուտով կը տանք մի քանի ցուցմունքներ:

Այժմ տեղական մասնաժողովներ զանազան քաղաքներում, եթէ կազմվել են կամ կը կազմվեն, պէտք է զառնան միայն օժանդակ ճիւղեր Էջմիածնի կենտրոնական յանձնաժողովի և փոխեն իրանց որոշումները՝ յունիսին, սեպտեմբերին կամ նոյեմբերին տօնելու հայկական տպագրութեան 400-ամեակը: Հայկական գրերի գիւտի 1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակը պէտք է տօնվեն համազգային մի մեծ տօնախմբութեամբ հոկտ. 13-ին Էջմիածնում:

Յոյս ունենք, որ Կ. Պօլսի յանձնաժողովն ևս, որ որոշել է նոյեմբերի 25-ին տօնել, նոյնպէս կը փոխէ իր որոշումը և կը միանայ Էջմիածնի որոշման:

Հ. Առաքելեան

ԹԻՒՐԿԻԱՅԻ ՇՈՒՐՁԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
16 մայիսի

Պօրտ-Սաիդ.—Կարմիր ծովից եկաւ իտալական երկու հակաականանաւ Իտալիա գնալու համար:

Տօքրով.—Մայիսի 14-ին առաւօտեան նոր ամրոցի տեղ որոնող զօրքերը ենթարկվեցին բէդուիւնների և կանօնաւոր թիւրքական զօրքերի զնդակած դուրս: Թիւրքերը փախան: Իտալացիք կորցրին երկու սպանված և երեք վիրաւոր: Թիւրքերի կորուստները ըստ երևոյթի շատ խոշոր են:

Սալօնիկ.—Ներքին գործերի մինիստրը Ուսկիւբում գտնված ժամանակ մի զեկուցագիր ուղարկեց Կ. Պօլս, որով պնդում է խուսափել վճռական միջոցներ ձեռք առնելուց ընդդէմ ալբաններին և զօրքեր չը կենտրոնացնել շերտօգորական սահմանագլխի վրա: Մինիստրը 40 էմիրարներ է ուղարկել յորդորելու այբաններին:

Հոսմ. — Ստիւտտարտի հաղորդութիւնը վճռաբանակ իտալաւորներին և ատանքը հայրենի:

ՊԱՐՍՎԱԿ

(Պետերբուրգ)

Թէրան.—Կարմիր ծովից հարկեց ապստամբութեանը հանանջեցին, կը յօսուի:

Մոսկ.—Թիւրք իշխանութիւնն մայիսի 7-ին ընկած ասիէրն:

ՎԵՐՁԻՆ

(Պետերբուրգ)

Պետերբուրգ.—Յր.—ի և «Be» իրր ժանդարմնատկի արտասովրա հսկող զնդգել շարունակ թիւններից մինտրութեանը վերներ, նաև Գումայն յայտարարողապետը Մեաստպել է զինւոր հաղորդագրութիւն ված քննութեան ձանց—ի թիւս Գուշկօվի և Սուվօրինի—հայ Գննութեան թիւնը հաղորդական խուղ մարմին գոյութեան մինիստրին մինիստրութեան գաղտնի տեղեկնում են գլխաւ գնեցրալի բաժն Այդ տեսակ տեստացվում էին պարտամենտից ձին գումարտ Մեաստէգօվին հաստատութիւնը զրագրութեան էր, փոխ-զնդպաշտօնավարելուր վարչութեաւորական յանձնում: Մեաստէգադրանքներ ոչութեան և ոչ պարտամենտութիւնիստրի մօտ մանակ Մեաստի և ծառայուկամ:

Բիշինէվ (Պ) պէիս ստացավագիւյի պիժրէգէրիկսից յազաւոր ամենաողորմ սարաբիայի 100-ամեակը րական Մեծական ձեռքով